# ՍՈՂԱՑՈՂ ՍՐԻԿԱՆ

Հակախորհրդային տրոցկիստական կենտրոնի մերկացումից և դատավարությունից հետո, տրոցկիստների՝ լրտեսների, դիվերսանտների, տեռորիստների պայքարի ամենալկտի, ամենահրեշավոր մեթոդներն ու միջոցները բացահայտելուց հետո, այժմ առանձնապես մեզ բոլորիս համար առավել խրատական են դառնում կուսակցության կենտրոնական օրգան «Պրավդա»-ի հետևյալ խոսքերը.

«Նորորեն դիմակավորված թշնամուն գտնելու համար հարկավոր է գիտենալ նրա տակտիկան, նրա ստոր աշխատանքի մեթոդները, սոցիալիզմի դեմ նրա մղած պայքարի ձևերը: Միմիայն այդ դեպքում կարելի յե դիպուկ կերպով նշան բռնել թշնամու վրա, խփել նրա սրտի մեջտեղը, կասեցնել նրա դավերը, կաշկանդել նրա դիվային պլանները»:

Անողոք կերպով ջախջախվելով բաց կռվում, հակահարված ստանալով մասսաներից, մեր կուսակցության թշնամիները, ժողովրդի յերդվյալ թշնամիները վաղուց է, վոր ընտրել են յերկերեսանիության, նենգ, ստոր դավերի ուղին: Խորհրդային իշխանության դեմ իր մղած պայքարում գործելով խլուրդի պես, գաղտագողի, թշնամին իր շոշափուկները տարածում է ամեն տեղ, վորոնում է թույլ օղակներ, ճեղքեր և այդ ճեղքերից ներս է սողում իր սև գործը կատարելու համար:

Ցեվ վորքան մենք կարողանանք — ինչպես «Պրավդան» է պահանջում — լավ ճանաչել թշնամու տակտիկան, նրա պայքարի մեթոդներն ու ձևերը, այնքան շուտ, որ առաջ կմերկացվի թշնամին:

Հակահեղափոխական տրոցկիստների պայքարի ամենատարածված մեթոդներից մեկն էլ այն է, վոր նրանք քողարկված կերպով սողոսկելով մեր ապարատները՝ ամեն կերպ աշխատում են ոգտվել տվյալ հիմնարկի կուսկազմակերպության զգաստության թուլությունից և այդ ապարատներում աշխատանքի տեղավորել, իրենց շուրջը համախմբել իրենց մարդկանց, վորպեսզի դրանով բարենպաստ մթնոլորտ ստեղծվի իրենց հակահեղափոխական, քայքայիչ աշխատանքի համար և վորպեսզի իրենք չմերկացվեն, մնան աննկատ:

Այդպիսի մեթոդ եր կիրառում հակահեղափոխական տրոցկիստ, Ձեթ-օճառ գործարանի նախկին դիրեկտոր Խ. Դեմիրչյանը՝ իր շուրջը համախմբելով դաշնակցական-հակահեղափոխական տարրերին:

Այդպիսի մեթոդ է կիրառել Հայվորսորդկոոպի նախագահ, այժմ մերկացված հակահեղափոխական տրոցկիստ Ավագ Ղազարյանը, վորը Վորսորդկոոպի սիստեմում աշխատանքի տեղավորվելով՝ իր շուրջն է համախմբել մի շարք անհարազատ տարրերի: Հենց դրա շնորհիվ է, վոր այդ սրիկան, հակահեղափոխական տրոցկիստը յերկար ժամանակ մնացել եր չմերկացված և հաջողությամբ անցել կուսփաստաթղթերի ստուգումից ու փոխանակումից: Նա դիմակազերծ արվեց և կուսակցությունից դուրս շպրտվեց միայն վերջերս:

Մինչև վերջին րոպեն նա ամեն կարգի կեղծիքով ու խարդախությամբ աշխատում եր նորից թաքցնել իր դեմքը, տրոցկիստին հատուկ մանյովրներով ճիգ ու ջանք եր թափում փորսող տալ, մնալ կուսակցության մեջ՝ իր քայքայիչ աշխատանքը շարունակելու համար:

Բայց փաստերն անողոք են: Նա մերկացվեց՝ վորպես մի զզվելի յերկերեսանի, վորը կուսակցության տոմս ունենալով գրպանում՝ վոչ մի առիթ բաց չի թողել անկյուններում, զանազան խոսակցությունների ընթացքում տրոցկիստական ամենալկտի պրովոկացիաներ տարածելու: Նա վոչ մի առիթ բաց չի թողել բարեխոսելու կապիտալիզմի անարգ ռեստավրատորների՝ ժողովրդի ամենավոխերիմ թշնամիների՝ տրոցկիստների, զինովյեվականների համար:

Հակահեղափոխական տրոցկիստ Ա. Ղազարյանի մերկացման փաստից ակնհայտ է դառնում, վոր ինչքան էլ Վորսորդկոոպի կուսկազմակերպության մեջ շաղակրատել են հեղափոխական զգաստության մասին, այնուամենայնիվ զգաստությունն իրականում բթացած է յեղել այդտեղ:

Ինչ խոսք, վոր այդ հակահեղափոխականն որ առաջ կմերկացվեր, յեթե կուսկազմակերպության զգաստությունը բթացած չլիներ, յեթե կուսկազմակերպությունը ժամանակին շրջահայաց լիներ՝ տեսներ և համապատասխան յեզրակացություններ աներ այն փաստից, թե այդ սրիկան ինչպես ըստ եության վնասարարություն է կազմակերպում Վորսորդկոոպում՝ պլանների կատարումը ձախողելով, պետական գումարներն ու միջոցները վատնելով, հափշտակելով ու յուրացնելով և զանազան պրովոկացիոն խոսակցություններ տարածելով:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ